

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

"Յուլիտյ" ՓԲԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

“Ֆոր Էյ Քոնսլթինգ” ՓԲԸ



"Four A Consulting" CJSC

audit — accounting — advisory — assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

[www. 4aconsulting.am](http://www.4aconsulting.am)
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՌԻԴՑՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Յուփեյ" ՓԲԸ-ի բաժնետիրոջը և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Յուփեյ" ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *"Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի վրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական սպացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական սպացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական սպացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

12 մայիսի 2026թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր-Աուդիտի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3,279	1,829
Ոչ նյութական ակտիվներ		3,156	3,752
Հետաձգված հարկային ակտիվներ	5	29,220	2,407
		<u>35,655</u>	<u>7,988</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		429	1,077
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	40,722	60,339
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	786,210	242,863
		<u>827,361</u>	<u>304,279</u>
Ընդամենը ակտիվներ		<u>863,016</u>	<u>312,267</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	8.1	100,400	100,400
Կուտակված շահույթ/վնաս		69,131	11,568
		<u>169,531</u>	<u>111,968</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	675,388	185,846
Ընթացիկ պահուստներ	9	18,097	14,453
		<u>693,485</u>	<u>200,299</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>863,016</u>	<u>312,267</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մայիսի 12-ին:

Տնօրեն  Մարիաննա Պետրոսյան

Փորձագետ հաշվապահ  Արմինե Ասոյան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների րադկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	10	264,945	306,719
Այլ եկամուտներ		3,732	34
		<u>268,677</u>	<u>306,753</u>
Փոխհատուցում աշխատակիցներին		(177,666)	(195,703)
Արձակուրդի պահուստ		(3,584)	(13,013)
Մաշվածություն և ամորտիզացիա		(2,235)	(2,463)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(3,205)	(1,794)
Առևիտրային և խորհրդատվական ծախսեր		(2,310)	(2,190)
Ապահովագրական ծախսեր		(1,009)	(1,058)
Անձնակազմի գծով ծախսեր		-	(216)
Վարձակալություն	12	(15,913)	(16,214)
Միջոցառումների ծախսեր		-	(50)
Այլ ծախսեր	11	(60,034)	(63,062)
Գործառնական գործունեությունից շահույթ		<u>2,721</u>	<u>10,990</u>
Ֆինանսական եկամուտներ/ծախսեր, զուտ	13	28,029	(1,988)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ, զուտ	14	-	20
Ծահույթ/վնասը մինչև հարկերը		<u>30,750</u>	<u>9,022</u>
Ծահույթահարկի գծով եկամուտ/ծախս	15	26,813	2,407
Չուտ շահույթ		<u>57,563</u>	<u>11,429</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>		-	-
<i>Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<u>57,563</u>	<u>11,429</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	400,000	(299,461)	100,539
Կանոնադրական կապիտալի նվազեցում	(299,600)	299,600	-
Տարվա շահույթ 2024թ.	-	11,429	11,429
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	11,429	11,429
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,400	11,568	111,968
Տարվա շահույթ 2025թ.	-	57,563	57,563
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	57,563	57,563
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,400	69,131	169,531

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ	57,563	11,429
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	2,235	2,463
Պահուստներում փոփոխություններ	3,644	7,145
Շահութահարկի գծով ծախս/եկամուտ	(26,813)	(2,407)
Ֆինանսական զուտ ծախս/եկամուտ	(28,029)	1,988
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	-	(20)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	8,600	20,598
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	18,264	(20,856)
Պաշարների փոփոխություն	648	(302)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	490,896	101,951
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<i>518,408</i>	<i>101,391</i>
Վճարված տոկոս	(4,400)	(4,058)
Վճարված շահութահարկ	-	-
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>514,008</i>	<i>97,333</i>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,089)	(1,064)
Ստացված տոկոսներ	32,429	2,070
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<i>29,340</i>	<i>1,006</i>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Պարտավորություններ օգտագործման իրավունքի ձևով	-	-
<i>Ֆինանսական գործունեության համար ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>-</i>	<i>-</i>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ան/նվազում	543,348	98,339
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1)	20
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	242,863	144,504
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	786,210	242,863

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Յուլիեյ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2018թ. հունիսի 7-ին, գրանցման համարը՝ 286.120.1021396, գրանցված՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետեզիստրի գործակալության տարածքային բաժնի կողմից 06.07.2018թ.:

Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական թանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Ընկերությունը դրամական փոխանցումների իրականացման լիցենզիա է ստացել ՀՀ կենտրոնական թանկի կողմից 2018թ. դեկտեմբերի 24-ին:

Ընկերության հիմնական գործունեությունը վճարումների ընդունման ծառայությունների մատուցումն է, մասնավորապես, հաճախորդների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական մյուջե վճարումների ընդունումը ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից և վարկերի տրամադրումը վարկային կազմակերպությունների (Պրինցիպալների) անունից իր 35 մասնաճյուղերի միջոցով:

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է «Յուլքոմ» ՓԲԸ-ին: Ընկերությունը չունի վերջնական հսկող կողմ:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 100,400 հազար դրամ: Մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 251 դրամ:

Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են ամբողջությամբ և սեփականության իրավունքով ամրագրված են միակ բաժնետիրոջը:

Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան Մանանդյան 33/3:

2025թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 75 մարդ (2024թ.՝ 82 մարդ):

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՖՀՄՍ-ների) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Մույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ դեկլարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական

հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ--ներն համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 16-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում» ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- «Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ» (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- «Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում» (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- «Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ» (ՀՀՄՍ 12 փոփոխություն):

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում», փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՄԻ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (<<ՄՄ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են << Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4,8711	3.71
ԱՄՆ դոլար	381,36	396.56
Եվրո	449,01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ

ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

	2025թ.
Վարձակալած տարածքի բարելավում	8-10 տարի
Համակարգիչներ և այլ սարքավորումներ	1-8 տարի
Գույք և գրասենյակային սարքեր	1-8 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ակտիվներ (Օգտագործման իրավունքի ակտիվներ) և վարձակալության պարտավորություններ բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունների:

Վարձակալության վճարները ճանաչվում են որպես վարձակալության պարտավորություն, իսկ համապատասխան օգտագործման իրավունքի ակտիվը գրանցվում է՝ ներկայացնելով Ընկերության իրավունքը օգտագործելու վարձակալված ակտիվը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վերաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ գեղչեր:

Այն դեպքում, երբ վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Ընկերությանը կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալված ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեսթ) ենթարկվեն:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սպանանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապանանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապանանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն թիվ 17.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դերբիտորական պարտքերը և այլ դերբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են .հավաքագրման համար պահվող կամ .հավաքագրման և վաճառքի համար պահվող բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Ընկերությունը հաշվառում է ներդրումը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և ցուցակված սեփական կապիտալի բաժնետոմսերը հաշվառել իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեքրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեքրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ “Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը”: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դերբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները,

ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ (Փուլ 1) և
- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ (Փուլ 2):
- Փուլ 3-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները, մինչդեռ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից: Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն թիվ 17.2-ում:

3.7 Մեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի տարբերությունը ներկայացվում է որպես էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.9 Ծահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.10 Հասույթի ճանաչում

Պայմանագրերից հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5 քայլի գործընթացով:

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրային զեղչերի և զիջումների գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման, ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը կրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Ընկերությունը հասույթը ստանում է հիմնականում վճարումների ընդունման ծառայություններից, մասնավորապես, հաճախորդների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունումից ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից և վարկերի տրամադրումից վարկային կազմակերպությունների (Պրինցիպալների) անունից:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Վարձակալած տարածքի բարելավում	Համակարգիչներ և այլ սարքավորումներ	Գույք և գրասենյակային սարքեր	Ընդամենը
<i>Սկզբնական շարժեր</i>				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ Ավելացում	1,664	2,224	3,493	7,381
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ավելացում	-	-	64	64
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ավելացում	1,664	2,224	3,557	7,445
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ավելացում	551	-	1,537	2,088
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,215	2,224	5,094	9,533
<i>Կուտակված մաշվածություն</i>				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	304	1,111	3,334	4,749
Տարվա ծախս	208	613	46	867
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	512	1,724	3,380	5,616
Տարվա ծախս	241	245	152	638
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	753	1,969	3,532	6,254
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,152	500	177	1,829
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,462	255	1,562	3,279

5. Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	2,407	-
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	26,813	2,407
Տարեվերջի մնացորդ	29,220	2,407

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Պահուստ	2,601	654	3,255
Հարկային վնաս	-	26,159	26,159
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	2,601	26,813	29,414
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցների մաշվածություն	(194)	-	(194)
Չուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(194)	-	(194)
Չուտ արդյունք	2,407	26,813	29,220

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2024թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հազար դրամ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Պահուստ	-	2,601	2,601
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	2,601	2,601
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցների մաշվածություն	-	(194)	(194)
Չուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	-	(194)	(194)
Չուտ արդյունք	-	2,407	2,407

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	26,122	44,395
Տրված կանխավճարներ	7,426	6,438
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	18	232
Այլ դեբիտորական պարտքեր	7,156	9,274
	40,722	60,339

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղի մնացորդ	588	316
Մնացորդներ բանկերում	742,202	139,111
Դրամական միջոցներ ճանապարհին	43,420	103,436
	786,210	242,863

8. Սեփական կապիտալ

8.1 Կանոնադրական կապիտալ

	Բաժնետոմսի անվանական արժեք ՀՀ դրամ 2025թ.	Բաժնետոմսի անվանական արժեք ՀՀ դրամ 2024թ.
400,000 հատ սովորական բաժնետոմսեր յուրաքանչյուրի անվանական արժեքը՝	251	251

Ընկերությունը 2024թ. օգոստոսի 23-ի՝ կուտակված վնասը ծածկելու նպատակով կատարել է կանոնադրական կապիտալի նվազեցում, ինչի արդյունքում նվազել է մեկ բաժնետոմսի անվանական արժեքը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 100,400 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 400,000 հազար հատ՝ 251 ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնետոմսերից:

8.2 Շահաբաժիններ

2025թ. և 2024թ. շահաբաժիններ չեն վճարվել:

9. Առևտրային կրեդիտորական պարտքեր և ընթացիկ պահուստներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	673,461	181,948
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	1,442	2,427
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	172	489
Ընթացիկ պահուստ	18,097	14,453
Այլ կրեդիտորական պարտքեր	313	982
	693,485	200,299

10. Հասույթ

Ընկերությունը հասույթը ստանում է հիմնականում վճարումների ընդունման ծառայություններից, մասնավորապես, հաճախորդների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունումից ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից և վարկերի տրամադրումից վարկային կազմակերպությունների (Պրինցիպալների) անունից:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայությունների մատուցումից հասույթ	264,945	306,719
	<u>264,945</u>	<u>306,719</u>

Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր	26,122	44,395
	<u>26,122</u>	<u>44,395</u>

Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Ծառայության տեսակը	Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները	Հասույթի ճանաչման քաղաքականություն
Վճարումների ընդունման, վարկերի տրամադրման, կանխիկի էլքագրման ծառայություններ	Կատարման պարտականությունները կատարվում են, երբ Ընկերությունը ծառայություններ է մատուցում Օպերատորների և Պրինցիպալների հաճախորդներին: Վճարումների ընդունման և վարկերի տրամադրման ակտերը ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 5-30 օրվա ընթացքում:	Մատուցված ծառայություններից ստացվող հասույթը ներառում է ծառայությունների օգտագործման դիմաց ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ մատուցվում են ծառայությունները: Կատարման առաջընթացը չափվում է Օպերատորների և Պրինցիպալների անունից մատուցված ծառայությունների ծավալի հիման վրա:

11. Այլ ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ինկասացիոն ծախսեր	9,278	12,287
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	887	4,189
Միջնորդավճարներ	14,081	7,089
Մասնաճյուղերի տեղակայման ծախսեր	10,258	11,508
Ծրագրային ապահովման գծով ծախսեր	2,700	2,332
Պետական տուրքեր	2,101	2,150
Տրանսպորտի գծով ծախսեր	925	901
Էական սխալների ուղղում	-	1,006
Այլ ծախսեր	19,804	21,600
	<u>60,034</u>	<u>63,062</u>

12. Վարձակալություն

Վարձակալության պայմանագրեր, որոնց շրջանակում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ

Ընկերությունը վարձակալում է գույք գլխամասային գրասենյակի համար, որն օգտագործվում է վարչական և գործառնական նպատակներով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գույքի վարձակալության բոլոր պայմանագրերի նկատմամբ կիրառվել է կարճաժամկետ վարձակալության համար նախատեսված բացառությունը:

Ընկերությունը վարձակալում է նաև սարքավորումներ, որոնց պայմանագրերի ժամկետը սահմանափակ չէ: Այս վարձակալություններն իրենցից ներկայացնում են փոքրաթեք ակտիվների վարձակալություններ: Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ այս վարձակալությունների հետ կապված:

Ընկերությանը մատուցվում է մայր Ընկերության կողմից մասնաճյուղերի տեղակայման գծով ծառայություն մայր ընկերության 35 մասնաճյուղերում, որտեղ իրականացվում է նաև իր գործունեությունը: Սա չի համապատասխանում ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանմանը, քանի որ համարվում է ոչ որոշելի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

Ծառայություն կամ վնասում ճանաչված գումարներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կարճաժամկետ վարձակալությանը վերաբերող ծախսեր	15,913	16,214
Փոքրաթեք ակտիվների վարձակալությանը վերաբերող ծախսեր՝ ներկայացված «այլ ծախսեր» հոդվածում	4,343	4,243
	<u>20,256</u>	<u>20,457</u>

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կարճաժամկետ վարձակալության վարձավճարներ	15,832	15,214
Փոքրաթեք ակտիվների գծով վարձավճարներ	4,283	4,825
	<u>20,115</u>	<u>20,039</u>

13. Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	32,429	2,070
Բանկային երաշխիքի գծով տոկոսային ծախս	(4,400)	(4,058)
	<u>28,029</u>	<u>(1,988)</u>

14. Փոխարժեքային տարբերությունից եկամուտ/վնաս, զուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(1)	20
Դերիտորական պարտքեր	-	-
Կրեդիտորական պարտքեր	1	-
	<u>-</u>	<u>20</u>

15. Ծահութահարկի գծով ծախս /փոխհատուցում

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	(26,813)	(2,407)
	<u>(26,813)</u>	<u>(2,407)</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Ծահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	30,750		9,022	
Ծահութահարկ՝ 18% (2024թ.՝ 18 տոկոս)	5,535	18.00	1,624	18.00
Նախորդ տարիների կուտակված հարկային վնասի օգտագործում	(32,348)	(105.20)	(4,031)	(44.68)
Ծահութահարկի գծով ծախս	<u>(26,813)</u>	<u>(87.20)</u>	<u>(2,407)</u>	<u>(26.68)</u>

16. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

16.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ընկերության ղեկավարությունը հիմնական միջոցների օգտակարության ժամկետները գնահատելիս հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 6-ում, հետաձգված հարկային ակտիվները ձևավորվել են արձակուրդի պահուստից և հիմնական միջոցներից, ներառյալ օգտագործման գծով ակտիվները: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

17. Ֆինանսական գործիքներ

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դերիտորական պարտքեր	33,278	53,669
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	786,210	242,863
Ընդամենը	819,488	296,532

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	692,043	197,872
Ընդամենը	692,043	197,872

17.3 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Ծուխայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Արտարժույթային ռիսկը Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վրա ունի հետևյալ ազդեցությունը՝

Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Այլ
2025թ.			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դերիտորական պարտքեր	33,278	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	786,032	178	-
	<u>819,310</u>	<u>178</u>	<u>-</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ	691,897	146	-
	<u>691,897</u>	<u>146</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	<u>127,413</u>	<u>32</u>	<u>-</u>
Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Այլ
2024թ.			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային դերիտորական պարտքեր	53,669	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	242,863	-	-
	<u>296,532</u>	<u>-</u>	<u>-</u>

Ֆինանսական պարտավորություններ

Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ	195,056	2,816	-
	<u>195,056</u>	<u>2,816</u>	<u>-</u>
Չուտ արդյունք	<u>101,476</u>	<u>(2,816)</u>	<u>-</u>

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի, ռուբլու, եվրոի և բրիտանական ֆունտստերլինգի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% աճին/նվազմանը: 10%-ը դեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Չզայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

2025թ. Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	Ռուբլու ազդեցություն	Եվրոի ազդեցություն
Շահույթ կամ վնաս	3	-	-

2024թ. Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	Ռուբլու ազդեցություն	Եվրոի ազդեցություն
Շահույթ կամ վնաս	282	-	-

գ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով

2025թ. հազար դրամ	Ցպահանջ և մինչև 3 ամիս մարման ժամկետով	4 ամսից մինչև 1 տարի մարման ժամկետով	1 տարուց ավել մարման ժամկետով
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	33,278	-	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	7,426	-	-
Դեբիտորական պարտք բյուջեի գծով	18	-	-
Դրամական միջոցներ դրամարկղում և բանկերում	786,210	-	-
Ընդամենը	826,932	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	673,774	-	-
Հարկային պարտավորություն	1,442	-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	172	-	-
Ընդամենը	675,388	-	-

2024թ. հազար դրամ	Ցպահանջ և մինչև 3 ամիս մարման ժամկետով	4 ամսից մինչև 1 տարի մարման ժամկետով	1 տարուց ավել մարման ժամկետով
Առևտրային դեբիտորական պարտքեր	53,670	-	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	6,438	-	-
Դեբիտորական պարտք բյուջեի գծով	232	-	-
Դրամական միջոցներ դրամարկղում և բանկերում	242,863	-	-
Ընդամենը	303,203	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	182,930	-	-
Հարկային պարտավորություն	2,427	-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	489	-	-
Ընդամենը	185,846	-	-

17.4 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը:

Ընկերության դեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	169,531	111,968
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(786,210)	(242,863)
Կապիտալ	(616,679)	(130,895)
Ընդհանուր սեփական կապիտալ	169,531	111,968
Վարկեր և փոխառություններ	-	-
Ընդհանուր ֆինանսավորում	169,531	111,968
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	(3.64)	(1,17)

18. Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի տվյալներ):

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը:

Ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Իրական արժեքը որոշվում է՝ համապատասխան դրամական հոսքերը զեղչված նմանատիպ գործիքների համար կիրառվող շուկայական տոկոսադրույքով: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Վերը նշված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

19. Պայմանականություններ

19.1 Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնան: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնանը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտաթուրքային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնանը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Այսպես տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկլարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

20. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերությունը վերահսկվում է միակ բաժնետիրոջ կողմից:

Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում «Յուվեյ» ՓԲԸ-ն:

Հաշվետու տարվա ընթացքում կապակցված կողմերի հետ իրականացված գործարքներ՝

Հազար դրամ

Բաժնետիրոջ հետ կատարված գործարքներ	Մնացորդը առ 31.12.2024թ.	Չուտ շարժ	Մնացորդը առ 31.12.2025թ.
Դեբիտորական պարտք	37,337	(27,028)	10,309
Կրեդիտորական պարտք	2,685	(315)	2,370

Բաժնետիրոջ հետ կատարված գործարքներ	Մնացորդը առ 31.12.2023թ.	Չուտ շարժ	Մնացորդը առ 31.12.2024թ.
Դեբիտորական պարտք	17,551	19,785	37,337
Կրեդիտորական պարտք	2,168	517	2,685

Դեկլարար անձնակազմի աշխատավարձը ժամանակաշրջանի ընթացքում կազմել է .

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	39,915	50,230